ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունվարի 2024 թվականի № 26-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ղեկավարի 2024 թվականի հունվարի 12-ի № /39/1286-2024 գրությունը՝ **որոշում եմ.**

1. *2024 թվականի սեպտեմբերի 17-20-ը* Երևանում կայանալիք Համաշխարհային հայկական գագաթնաժողովի շրջանակներում նախատեսվող ցուցահանդեսում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզը ներկայացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

1) ***Ահարոն Սահակյան*** – աշխատանքային խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետ,

2) ***Հայկ Մկրտչյան*** – աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ,

3) ***Մհեր Գևորգյան*** – աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

4) ***Ստեփան Բաղդասարյան*** – աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի օգնական,

5) ***Հարություն Ալեքսանյան*** – աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ,

6) ***Կարեն Հունանյան*** – աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,

7) ***Մհեր Եղիազարյան*** – աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ,

8) ***Համլետ Ստեփանյան*** – աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ,

9) ***Նաիրա Մարգարյան*** – աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ,

10) ***Մարինե Հովակիմյան*** – աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ,

11) ***Ինգա Հայրիյան*** – աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ:

2. Աշխատանքային խմբին՝ պարբերաբար կազմակերպել նիստեր և քննարկումներ, կատարված աշխատանքների արդյունքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն աշխատանքային խմբի ղեկավարին:

3. Աշխատանքների ավարտը սահմանել *2024 թվականի սեպտեմբերի 16-ը*:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2024 թվականի հունվարի 18
ք. Հրազդան